Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-578-02.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «փորձաքննության» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ մոտարկման համապատասխանության որոշման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 11-րդ կետ.

«11) մոտարկում՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծ մշակելու միջոցով միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում ներպետական օրենսդրության համապատասխանեցումը առանձին ոլորտներում տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված իրավական կարգավորումներին:»

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «սույն օրենքին» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության եւ ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջեւ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով (այսուհետ սույն հոդվածում՝ Համաձայնագիր) նախատեսված մոտարկման շրջանակներում մշակված նախագծերի դեպքում՝ նաեւ սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նշված Եվրոպական միության օրենսդրությանը»:

2. 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկումն ապահովելու նպատակով մշակված նորմատիվ իրավական ակտի նախագծին կցվող հիմնավորումը ներառում է նաեւ առանձին նշում՝

1) Եվրոպական միության մոտարկման ենթակա օրենսդրության մասին, որը ներառում է մոտարկման ենթակա իրավական ակտի վերնագիրը, համարը եւ ընդունման ամսաթիվը եւ.

2) ներկայացված նախագծի՝ Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանեցման կամ մասնակի համապատասխանեցման (ներառյալ՝ չհամապատասխանեցման) պատճառների վերաբերյալ:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

2. Կառավարության աշխատակարգում և Արդարադատության նախարարության կանոնադրության մեջ սույն օրենքի իրականացումն ապահովող փոփոխությունները պետք է իրականացվեն մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «փորձաքննության» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ մոտարկման համապատասխանության որոշման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 11-րդ կետ.

«11) մոտարկում՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծ մշակելու միջոցով միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում ներպետական օրենսդրության համապատասխանեցումը առանձին ոլորտներում տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված իրավական կարգավորումներին:»

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «սույն օրենքին» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության եւ ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջեւ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով (այսուհետ սույն հոդվածում՝ Համաձայնագիր) նախատեսված մոտարկման շրջանակներում մշակված նախագծերի դեպքում՝ նաեւ սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նշված Եվրոպական միության օրենսդրությանը»:

2. 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկումն ապահովելու նպատակով մշակված նորմատիվ իրավական ակտի նախագծին կցվող հիմնավորումը ներառում է նաեւ առանձին նշում՝

1) Եվրոպական միության մոտարկման ենթակա օրենսդրության մասին, որը ներառում է մոտարկման ենթակա իրավական ակտի վերնագիրը, համարը եւ ընդունման ամսաթիվը եւ.

2) ներկայացված նախագծի՝ Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանեցման կամ մասնակի համապատասխանեցման (ներառյալ՝ չհամապատասխանեցման) պատճառների վերաբերյալ:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

2. Կառավարության աշխատակարգում եւ Արդարադատության նախարարության կանոնադրության մեջ սույն օրենքի իրականացումն ապահովող փոփոխությունները պետք է իրականացվեն մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը~~ուց հետո մեկամսյա ժամկետում~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-578-02.05.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «փորձաքննության» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ մոտարկման համապատասխանության որոշման» բառերը:»՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում» բառերն առաջարկում ենք փոխարինել է «մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը» բառերով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաև այն օրենսդրական ակտի հիման վրա, որն ընդունվել, սակայն դեռեւս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: